ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/48**

«ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի կարիքների համար տրանսպորտային միջոցների անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-24/48 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1: Ընթացակարգի հրավերի 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ձեռքբերվող գնման առարկաների տեխնիկական բնութագիրը թերի է շարադրված, նշված է, որ «երաշխիքային ժամկետ է սահմանվում 40.000 կմ կամ ավելը», սակայն նշյալ մասը անհրաժեշտ է խմբագրել և ներկայացնել հետևյալ կերպ. «Ապրանքը պետք է ունենա երաշխիք՝ նախատեսված 40.000 կմ-ի համար, որը վերաբերվում է միայն գործարանային թերություններին»:

Փոփոխության նկարագրություն: Ընթացակարգի հրավերի 1-3-րդ չափաբաժինների մասով ներկայացված ձեռքբերվող գնման առարկաների տեխնիկական բնութագրերի «երաշխիքային ժամկետ է սահմանվում 40.000 կմ կամ ավել» արտահայտությունը խմբագրվել և ներկայացվել է հետևյալ կերպ. «Ապրանքը պետք է ունենա երաշխիք՝ նախատեսված 40.000 կմ-ի համար, որը վերաբերվում է միայն գործարանային թերություններին»:

Փոփոխության հիմնավորում: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Էլոյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 10)
Էլ. փոստ՝ m.simonyan@promotion.am
Պատվիրատու՝ «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ